ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2106 - Ա **06 ապրիլի 2009թ.**

ՆՈՐ ԱՐԵՇԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 125 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԲԵՆ ԳԵՈՐԳԻԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ, ՆԱԻՐԻ ԳԵՈՐԳԻԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ, ՖԻՐՈՒԶԱ ԳՈՒՐԳԵՆԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ռուբեն Գեորգիի Աղաջանյանի (ծնված 27.07.1974թ.), Նաիրի Գեորգիի Աղաջանյանի (ծնված 22.10.1963թ.), Ֆիրուզա Գուրգենի Աղաջանյանի (ծնված 08.10.1944թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նոր Արեշի 8-րդ փողոցի հ.125 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 470.69քմ, որից 441քմ մակերեսով հողամասը Ռուբեն Գեորգիի Աղաջանյանին, Նաիրի Գեորգիի Աղաջանյանին, Ֆիրուզա Գուրգենի Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (450քմ մակերեսով հողամասից օգտագործվում է 441քմ մակերեսով հողամասը): Օրինական հողամասին կից օգտագործվող 29.69քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1990 թվականը, 02.12.2005թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 19.03.2009թ. հ.20/2-Ե/139 գրությունը, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 11.03.2009թ. հ.20-Ել-1687 եզրակացությունը, համաձայն որի Նոր Արեշի 8-րդ փողոցի հ.125 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նոր Արեշի 8-րդ փողոցի հ.125 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ռուբեն Գեորգիի Աղաջանյանի, Նաիրի Գեորգիի Աղաջանյանի, Ֆիրուզա Գուրգենի Աղաջանյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 441քմ մակերեսով հողամասին կից 29.69քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 29.69քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Նոր Արեշի 8-րդ փողոցի հ.125 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Նոր Արեշի 8-րդ փողոցի հ.125 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Ռուբեն Գեորգիի Աղաջանյանի, Նաիրի Գեորգիի Աղաջանյանի, Ֆիրուզա Գուրգենի Աղաջանյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Էրեբունի թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ